ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 11
06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի

ք. Երևան 12.06.2020 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս կոոպերատիվի նախագահ Դ. Խաչատրյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.05.2020թ. N 709-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված 2020թ. ընթացքում կատարման ենթակա աշխատանքների գինը սահմանել 56 451 880 (հիսունվեց միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 9 408 647 (ինը միլիոն չորս հարյուր ութ հազար վեց հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

բ) Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր օրացույցային գրաֆիկով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

գ) Պայմանագրի N 3 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

1.2 Հիմք ընդունելով հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից 11.03.2020թ. ներկայացրած առաջարկությունը՝ 2019թ. վերանայված օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ սահմանել 29.09.2020թ. ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից, հավելված N 2-ը՝ 1 (մեկ) էջից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Բազալտշին>> ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	Գեղարքունիքի մարզ
կառավարական տուն 3	գ. Գեղարքունիք
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Վարդանանց մ/ճ
Հ/Հ 900011012573	Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 08400345
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Դ. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
06.07.2017թ. կնքված
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի
12 .06.2020թ. կնքված N 11 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար 2020թ. հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների ծավալների և առանձին աշխատանքների տեսակների

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Աշխատանքների կատարման ժամկետը մինչև
1	56 451 880	Պատերի ամրացում՝ տորկրետացում, խարսխի տեղադրում անցքերում, ծածկի ամրացում՝ ամրանային կարկասի պատրաստում, խոռոչների բետոնացում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012573
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կապալառու՝

<<Բազալտշին>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ
գ. Գեղարքունիք
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Վարդանանց մ/ճ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345

Նախագահ՝

_____ Դ. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
06.07.2017թ. կնքված
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի
12 .06.2020թ. կնքված N 11 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(Բաժին 09, խումբ 06, դաս 01)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգում	-	-	-	-	-	-	-	-	-	56 451 880	56 451 880	56 451 880	56 451 880

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012573
ՀՎՀՀ 02565827

Կապալառու՝

<<Բազալտշին>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ
գ. Գեղարքունիք
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Վարդանանց մ/ճ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Նախագահ՝

_____ Դ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «12» 06 2020թ.**

<<Բազալտշին>> ԱԿ-ն, ի դեմս Ընկերության նախագահ Դավիթ Խաչատրյանի (AT0450224, 06.11.2019թ., 001), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Բազալտշին>> ԱԿ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղարքունիք
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Վարդանանց մ/ճ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345

Նախագահ՝ Դավիթ Խաչատրյան

Կ.Տ

Օր/ամիս/տարի

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ <<Բազալտշին>> ԱԿ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Վարդանանց մ/ճ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1150000278680100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08400345	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 5 645 188 (հինգ միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր ութսունութ)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ (պայմանագրի կատարման ապահովման համար)	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*